Լեհահայոց Մշակույթի և Ժառանգության հիմնարկության 2011 թ.

գործունեության հաշվետվություն

2011 թ. շարունակեցինք հավաքածուի մշակման, նյութերի մատչելիության, լեհահայոց հայկականքի վերաբերյալ տեղեկատվության տարածման եւ հուշարձանների վերականգնման վրա հիմնված մեր գործունեությունը:

ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

Գույքագրել ենք Հիմնարկության պահոցներում գտնվող բոլոր փաստաթղթերն ու մշակել արխիվային միավորների բաժանման հայեցակարգ, որը հնարավորություն կտա սկսելու մեր հավաքածուի կանոնակարգման աշխատանքները:

Կազմել ենք Հիմնարկության հավաքածուի հայկական ձեռագրերի ցուցակ:

ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Լեհահայոց Վիրտուալ Դիվանում (www.archiwum.ormianie.pl) տրամադրել ենք եզակի նյութեր, այդ թվում՝

▪ Լվովի հայկական տաճարի 1776-1837 թթ. ծննդոց գրքի համակարգված գրառումները

▪ «Սբ. Գրիգորի Սուրհանդակի» բոլոր, այդ թվում սակավ հայտնի 1935-1937 թթ. հրատարակումները

▪ 1937 թ. արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի համար պատրաստված հուշագիրը, որը պարունակում է Լվովի հայածես թեմականների ստորագրությունները:

▪ Հորոդենկայի ծխական հայ համայնքի ամուսնությունների գրառումների գիրքը:

ԼԵՀԱՀԱՅՈՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ

Թողարկել ենք «Աւետիս» ամսագրի չորս համար, որտեղ նախաձեռնել ենք այդ թվում «Հաշվառվենք» գործողությունը, որը բոլորին խրախուսում էր մասնակցելու համընդհանուր մարդահամարին և արձանագրել իրենց հայկական ազգությունը: Այդ առումով համատեղ հանդես գալու կոչով համախմբել էինք Լեհաստանի հայկական բոլոր կազմակերպություններին:

Address for correspondence: Ewa Abgarowicz, Ośniki 6A, 05-155 Leoncin, Poland
tel. +48 22 794 80 80, 0-606 784 928, e-mail: fundacja@ormianie.pl
www.heritage.ormianie.pl

Մեր կողմից իրականացվող «Լեհահայոց Վիրտուալ Աշխարհ» (www.ormianie.pl) կայքը մեկ տեղում համախմբում է մինչ այդ տարաբաշխված կայքեր՝

▪ Լեհահայոց Մշակույթի և Ժառանգության Հիմնարկության կայքէջ, որը կազմակերպում է հինգ տարբեր կայքեր՝

▪ www.dziedzictwo.ormianie.pl, ուր տեղադրվում են Լեհաստանի Հայերի վերաբերյալ ընթացիկ նորություններ: 2011 թ. կայքը հարստացվեց անգլերեն և հայերեն տարբերակներով,

- www.wiki.ormianie.pl «վիկի» կայքի նմանությամբ ամբարված են Հայերի կենսագրություններ, ովքեր կապված էին Լեհաստանի հետ,
- www.archiwum.ormianie.pl, այսինքն Լեհահայոց Վիտուալ Դիվան, որը համացանցում տրամադրում է լեհահայոց վերաբերյալ արխիվային հարուստ տեղեկություն,
- www.skarbnica.ormianie.pl, այսինքն Լեհահայոց Տեղեկատու Գանձարան, ուր կան պատմական պատրաստի նյութեր, որոնք կլրացվեն 2012 թ.,
- www.awedis.ormianie.pl, ուր ներկայացված են «Աւետիս» ամսագրի հերթական համարները,
- Լեհաստանում հայկական այլ կազմակերպությունների կայքեր
- Լեհաստանում հայկական թեմերի կայքեր:

Հրատարակել ենք 2011 թ. և 2012 թ. երկու օրացույց՝ «Լեհահայոց ընտանիքները անցյալի նկարներում» և «Լվովի հայկական հուշարձանների պահպանումը» խորագրերով:

Վրոցլավի Ազգագրության թանգարանում ամռան երկու ամիսների ընթացքում Լեհահայոց ընկերությունը Հիմնարկության և Պատմության հետ հանդիպման տան հետ միասին ներկայացրեց «Հայացքն Արարատին. Հայերի ճակատագրերը Լեհաստանում» ցուցահանդեսը, որն ուղեկցվում էր հայկական հինգ միջոցառումներով:

Երիցս ցուցադրել ենք «Մեծ մոռացվածը. Լեհահայոց արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչ (1864-1938)՝ ականավոր լեհ հոգևորական և պետական այր» խորագրով ցուցահանդեսը՝

- 2011 հունիսից մինչև սեպտեմբեր Հովհաննես Պողոս II անվ. Կրակովի Պապական

Address for correspondence: Ewa Abgarowicz, Ośniki 6A, 05-155 Leoncin, Poland
tel. +48 22 794 80 80, 0-606 784 928, e-mail: fundacja@ormianie.pl
www.heritage.ormianie.pl

համալսարանում,

- 2011 թ. հոկտեմբերին Գլիվիցեի Ձեռներեցության Բարձրագույն դպրոցում,
- 2011 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Մշակույթի և Մասսայականացման կենտրոնում՝ Ազգային հիշողության Յարոսլավի ինստիտուտի ժեշովյան բաժանմունքի միջնորդությամբ:

Հիմնարկությունը հանդիսանում էր Կարդինալ Ստեֆան Վիշինսկու անվան համալսարանում կազմակերպած «Հայերը Լվովում՝ պատմություն, մշակույթ, արվեստ» խորագրով գիտաժողովի (2011 թ. դեկտեմբերի 9–10) համահեղինակը:

Տեղեկատվության մասսայականացմանն ուղղված ավանդական միջոցառումներից էր 2011 թ. դեկտեմբերի 3-ին Վարշավայի Պատմության հետ հանդիպման տան հետ միասին կազմակերպված Հայկական Օրը: Ծրագրում ընդգրկված էին՝ Վարշավայում հայկական հուշարձանների, հայկական ձեռագրերի նկարազարդման, ձեռագրերի ու հնատիպ գրքերի պահպանման մասին զեկույցներ, Յուզեֆ Թեոդորովիչ մասին պատմող ֆիլմ նրա մահվան 73-րդ տարելիցից մեկ օր առաջ, հայածես սուրբ պատարագ, ինչպես նաև զվարճանքներ երեխաների համար:

ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շարունակվեց Լվովի հայկական տաճարի բակում տեղադրված «Գողգոթա» կոչվող փայտե քանդակի վերանորոգման նախագիծը: 2011 թ. վերականգման հանձնվեցին քանդակի ապամոնտաժված տարրերը: Աշխատանքների ավարտը նախատեսված է 2012 թ.:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ավելի սերտ կապեր ստեղծվեցին Հայաստանի, ինչպես նաև արևմուտքի հայկական Սփյուռքի հետ: Հիմնարկության հարկի տակ հյուրընկալեցինք մասնագետների Մատենադարանից, ԵՊՀ-ից և ՀՀ Մշակույթի նախարարությունից, ինչպես նաև պատմաբանների ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Բելգիայից:

Address for correspondence: Ewa Abgarowicz, Ośniki 6A, 05-155 Leoncin, Poland
tel. +48 22 794 80 80, 0-606 784 928, e-mail: fundacja@ormianie.pl
www.heritage.ormianie.pl

Սեպտեմբերին Լեհաստանում բնակվող բոլոր հայերի անունից Հիմնարկությունը Մատենադարանին հանձնեց Սկևռայի Ավետարանի նմանահանությունը:

ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆՍՏԱՎԱՅՐԸ

2011 թ. մարտից Հիմնարկությունը, ինչպես նաև նրա կողմից ղեկավարվող Լեհահայոց Դիվանը գործում է Վարշավայի կենտրոնում՝ Զգոդա 4, բն. 16 հասցեում: Տեղափոխման կապակցությամբ կազմակերպվեց հանդիպում, որի ընթացքում ներկայացվեցին Լեհահայոց Դիվանի եզակի նմուշներ, ինչպես նաև Հիմնարկության հնգամյա գործունեության մասին հաշվետվություն: Մասնաշենքի հանդիսավոր օծման արարողությունը կատարեց Հիմնարկության հիմնադիր և Լեհաստանում հայ ծիսակարգով հավատացյալների օրդինարիուս կարդինալ Կաժիմիեժ Նիչը:

Address for correspondence: Ewa Abgarowicz, Ośniki 6A, 05-155 Leoncin, Poland
tel. +48 22 794 80 80, 0-606 784 928, e-mail: fundacja@ormianie.pl
www.heritage.ormianie.pl